ԱՐԱԳԱԾԻ ՏԻՐԻՆԿԱՏԱՐ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռաֆիկ Գաբրիելյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ rafik.gabrielyan.93@gmail.com
ORCID: 0009-0005-5965-2614
Հոդվածը ներկայացվել է 30.11.2023, գրախոսվել է 06.03.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-323

Ամփոփում

Արագածի Տիրինկատար հնավայրը գիտական աշխարհին հայտնի է դարձել 2012 թ.: Հնագիտական հուշարձաններից զատ, տարածքում կան նաև բազմաթիվ ազգագրական բնույթի կառույցներ:

Դրանք, ըստ իրենց գործառույթների, կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի՝ տնտեսական և հոգևոր: Տնտեսական ոլորտին են պատկանում կացարանները, ջրանցքները, ջրի աղբյուրները և սանդերը: Հոգևոր հուշարձաններ են սրբավայրերը, երազանքի քարերը, ինչպես նաև գերեզմանոցը:

Կացարանները քարաշեն են, որոնց կից առկա են մակաղատեղեր: Դրանք սովորաբար ունենում են ուղղանկյուն հատակագիծ: Սանդերը նույնպես գտնվում են կացարանների մոտակայքում: Տիրինկատարում բխող երեք աղբյուրների ջրերն օգտագործվում են խմելու և կենցաղային կարիքների համար:

Տիրինկատարի կարևոր սրբավայրերից է Աղջկա սուրբը, որի մերձակայքում դրված են բազմաթիվ երազանքի քարեր: Սրբավայրը, որը քառակուսի հատակագծով քարաշեն կառույց է, պաշտամունքային վայր է և՛ հայերի, և՛ եզդիների համար, այնտեղ մինչ օրս իրականացվում են տարբեր ծեսեր:

Բանալի բառեր՝ Արագած, Տիրինկատար, սրբավայր, ջրանցք, ամառանոցային արոտավայր, աղբյուր, կացարան:

Ներածություն

2012 թ. ի վեր իրականացվում է Արագածի Տիրինկատար հնավայրի հնագիտական ուսումնասիրությունը հայ-իտալա-գերմանական արշավախմբի կողմից[1]: Նշված տարածքի պատմամշակութային արժեքները հետաքրքիր են նաև ազգագրական տեսանկյունից, և հնագիտական պեղումներին զուգահեռ տեղի սարվորների շրջանում անցկացվել են ազգագրական հարցազրույցներ, ինչպես նաև արձանագրվել, չափագրվել, զննվել, լուսանկարահանվել են ազգագրական արժեք ունեցող օբյեկտներ: Սույն

[1] Օգտակար խորհուրդների, առաջարկների և աջակցության համար շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ Սուրեն Հոբոսյանին, ճարտարապետ Արտակ Հախվերդյանին, հնագետներ Արտյոմ Անանյանին և Արսեն Բոբոխյանին:

հոդվածով փորձ է արվում ընդհանրացնել բազմաթիվ հետազոտությունների նախնական արդյունքները՝ զուգահեռաբար համեմատելով հայկական մշակույթից հայտնի այլ օրինակների հետ:

Տիրինկատարը՝ որպես տնտեսական գոտի

Ամառանոցային արոտավայրը. Տիրինկատարը ծովի մակարդակից մոտ 2850 մ բարձրությամբ խիստ հարթ սարավանդակ է: 1954 թ. առ այսօր տարածքը Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղի ամառանոցային արոտավայրն է: Մինչ այդ այն պատկանել է Արագածոտնի մարզի Շամիրամ գյուղին:

Տեղի սարվորները հստակ պատկերացում ունեն տարածքի, դրա սահմանների և տեղանքում կողմնորոշվելու բնական կամ մշակութային ուղենիշների վերաբերյալ: Տիրինկատարից արևելք գտնվում է՝ Ամբերդաձորը, ուր հաճախ իջնում են սարվորները՝ Ամբերդ գետից ձուկ որսալու նպատակով: Ամառանոցային կացարաններին ավելի մոտ է արևմտյան փոքր ձորակը, որով հոսող գետակում սարվորները լողանում և լվացք են անում: Ջրի սակավության դեպքում կենդանիներին բերում են այստեղ ջրելու: Հյուսիսային կողմում է գտնվում՝ Սև սարը. այստեղ հասնելու համար պետք է անցնել զառիվայր ու առապար լանջով՝ *կռերով:* Այն, որպես Արագածի ամառանոցային կարևոր արոտավայր, հիշատակում է նաև Ավետիս Քալանթարը[2]: Հարավային կողմում որպես տարածքի կողմնորոշման նշացույցեր են ծառայում *Աղջկա սուրբը* և փոքր թեքություն ունեցող լանջը: Արդեն բուն հարթ տարածքում կարևոր կողմնորոշիչներ են հյուսիսային մասում գտնվող երեք լճակները, որոնք ամռան ամիսներին երբեմն ցամաքում են, և հյուսիսից հարավ ձգվող երկու ոլորապտույտ հեղեղատները, որոնց հատվածներում ևս ձնհալից հետո ժամանակավոր լճակներ են գոյանում:

Վերջին շրջանում Տիրինկատարում ամռանը իրենց անասունները պահում են հայ և եզդի 5-6 ընտանիք, մինչդեռ խորհրդային տարիներին այնտեղ, հունիսի սկզբից մինչև սեպտեմբերի առաջին կեսը, պահվել են պետական տնտեսությունների և մի քանի տասնյակ ընտանիքների խոշոր ու մանր եղջերավոր անասունները:

Ուշագրավ է, որ Տիրինկատարում ամառվա ամիսներին սերնդեսերունդ ապրող սարվորները տարածքի նկատմամբ ունեն ավանդաբար ձևավորված հոգատար, անգամ սրբազնացված վերաբերմունք: Դա նույնիսկ այնքան ցայտուն է դրսևորվում, որ, երբ սկսվել են հնագիտական աշխատանքները, տեղացիներից ոմանք, սովորույթի ուժով, փորձել են խոչընդոտել հնագիտական աշխատանքները, հատկապես վիշապ քարակոթողների

[2] Калантар 1895, 74.

շրջակայքում՝ պատճառաբանելով, թե դրանք հսկայի գերեզմաններ են և սրբություն են համայնքի համար[3]:

Ամառային բնակատեղեր ու կացարաններ. Տիրինկատարի տարբեր հատվածներում առկա են մեծ քանակությամբ տնտեսական համալիրի մաս կազմող բնակատեղեր՝ քարաշեն կացարաններ (նկ. 1)[4] և բերատեղեր (մակաղատեղեր): Ըստ իրենց տեղաբաշխվածության, դրանք պայմանականորեն կարելի է բաժանել ութ խմբի՝ իրենց տարաբնույթ կառույցներով: Շուրջ 7.5 հա տարածքում նկատվում են մոտ 100 շինության հետքեր: Դրանցից 28-ը քարե կացարաններ են, 39-ը՝ մակաղատեղեր՝ առանձին փոքր կցակառույցներով: Այդ կառույցները կարելի է թվագրել XIX դ. երկրորդ կեսից մինչև XX դ. ընկած ժամանակահատվածով:

Ամառանոցային ժամանակավոր բնակավայրի ընտրության կարևոր նախապայմաններ էին քամիներից պաշտպանված լինելը, ջրի առկայությունը, բաց տեսադաշտ ունենալը, տարածքի չոր ու հարթ լինելը և այլն: Արագածի ամառանոցային արոտավայրերում, տարածքը ավելի հեշտ վերահսկելու նպատակով, երբեմն ընտրում էին հարևան արոտատեղի հետ ունեցած սահմանային հատվածը՝ նրանց կենդանիների հավանական մուտքը իրենց տարածք կանխելու համար[5]:

Տիրինկատարում առկա կացարանների պատերը պահպանվել են՝ 40-125 սմ բարձրությամբ: Դրանք կառուցված են չոր շարվածքով և, ամենայն հավանականությամբ, ունեցել են փայտե ծածկ: Նման կառույցները տարածված են Հայաստանի գրեթե բոլոր բարձրադիր շրջանների ամառանոցային արոտավայրերում[6]: Այստեղ դրանք հիմնականում օգտագործվել են մինչև 1980-90-ական թվականները: Ավ. Քալանթարը նշում է, որ Արագածի ամառանոցներում հայերն ապրում էին գլխավորապես քարաշեն կացարաններում, իսկ քուրդ և թուրք կիսաքոչվոր ցեղերը՝ տարբեր ձևերի վրաններում (*չադր, ալաչուխ և այլն*), որոնց տեղափոխությունը դյուրին էր[7]: Այս օրինաչափությունը առկա է նաև Տիրինկատարում: Այժմ պահպանված բոլոր կացարանները պատկանել են հայ ընտանիքներին[8]: Ներկայումս, և՛ հայերը, և՛ եզդիները օգտագործում են խորհրդային արտադրության գործարանային վրաններ: Վրանների եզրային հատվածներում 0,3-0,4 մ բարձրությամբ քարաշարեր են անում, որպեսզի դրանք դիմանան ուժեղ քամիներին:

---

[3] Գաբրիելյան 2023, բանասաց՝ Աբգար Աբգարյան:

[4] Ժողովուրդը այս կառույցներին տարբեր անվանումներ է տալիս՝ հոլիկ, քոխտիկ, հյուղ, օդա, սարի տուն և այլն (Мкртумян 1974, 56, прим. 64, 57-58):

[5] Калантар 1895, 99, Мкртумян 1974, 56.

[6] Պապուխյան 1972, 105-107, Հալաջյան 1973, 133-134, Мкртумян 1974, 51:

[7] Калантар 1895, 99-101.

[8] Գաբրիելյան 2023, բանասաց՝ Աբգար Աբգարյան:

Գրեթե բոլոր մակաղատեղերն ուղղանկյուն հատակագիծ ունեն՝ 0,45 մ լայնությամբ և 1,50 մ բարձրությամբ պատերով կառուցված չոր շարվածքով: Կան այնպիսի մակաղատեղեր, որոնք ավելի բարակ պատով բաժանված են երկու մասի. որպես միջնորմ ծառայող այդ պատն ունի դռան տեղ: Նմանատիպ մակաղատեղերը նախատեսված են եղել կաթնատու ոչխարների/այծերի համար: Արոտից վերադարձող ոչխարներին տեղավորում էին նախ մակաղատեղի մի մասում, ապա, հերթով կթելով, ուղարկում մյուս մասը: Այսպես ավելի դյուրին էր կթված կենդանիներին չկթվածներից տարբերելը[9]:

Բացի ոչխարներից, հայերը սար են տարել նաև խոշոր եղջերավոր անասուններին: Հերկը ավարտելուց հետո, լծկան կենդանիներին՝ եզներին ու գոմեշներին, պարարտացնելու նպատակով, կարճ ժամանակով սար էին տանում: Այս առումով, Ավ. Քալանթարը հայտնել է մի ուշագրավ տեսակետ, ըստ որի, Հայաստանի որոշ շրջաններում անասնապահությունը ծառայեցվել է երկրագործության կարիքները բավարարելուն[10]: Որոշ վայրերում գոմեշներն օգտագործվել են նաև որպես գրաստ՝ սար բարձրանալիս կայքը տեղափոխելու համար, քանզի դրանք դիմացկուն են տապի նկատմամբ և համարյա թե չեն վարակվում զանազան հիվանդություններով[11]: Գոմեշը տավարի համեմատ ունի ևս մեկ առավելություն. դրա կաթը կովի կաթի համեմատ գրեթե կրկնակի յուղոտ է[12]:

Սանդերը. Տիրինկատարի ամառանոցում պահպանվել է վեց սանդ, որոնք այժմյան սարվորները *դինգ*[13] են անվանում: Սանդերն ունեն 0,25-0,40 մ խորությամբ և 0,30–0,45 մ տրամագծով փորվածքներ: Դրանցից հինգը փորված են գետնի մեջ բնականորեն մխրճված, բազալտե, մոխրագույն և կապտավուն սալաքարերի մեջ, իսկ մեկը գտնվում է N 7 վիշապա-

[9] Գաբրիելյան 2023, բանասաց՝ Զոհրաբ Աբգարյան:

[10] Калантар 1895, 104, 109-110.

[11] Хан-Агов 1886, 326.

[12] Калантар 1895, 113.

[13] Ժողովրդական բառապաշարում *դինգ* անունը տալիս են հացաբույսերի վերամշակման համար նախատեսված երեք տիպի համալիրների: Առաջինը հասարակ սանդն է, որի մեջ հումքը վերամշակում են ձեռքի թակիչով: Երկրորդն աշխատում է ոտքի հարվածի միջոցով: Այն ունի քարե սանդ, որի ուղղությամբ տեղադրված է փայտե լծակ, վերջինիս եզրին ամրացված է քարե թակիչը, որն էլ լծակի գործարկման ժամանակ վեր է բարձրանում և իջնելով՝ հարվածում է սանդին: Այս համալիրը, ըստ էության, նախորդի ավելի կատարելագործված տարբերակն է (Բդոյան 1972, 12-21): Երրորդ համալիրն իր կառուցվածքով ավելի բարդ է: Այն ունի երկու շրջանաձև քարեր: Ստորինը տեղադրված է հորիզոնական դիրքով՝ անշարժ: Այն ուղիղ կենտրոնում ունի ամրացված մետաղյա ուղղահայաց ձող: Վերևի քարը ուղղահայաց դիրքով պտտվում է այդ ձողի շուրջը՝ ստորին քարի եզրային հատվածի վրայով: Այն իր կենտրոնում ունի անցք, որով անցկացված է փայտե ձող: Վերջինս իր մի եզրով կապված է ուղղահայաց մետաղե ձողին, իսկ դրա մյուս եզրին կապվում է քարը պտտող կենդանին (ավանակ, ջորի): Դինգերը առանձին կառույցներ են, սակայն նման սարքավորումներ օգտագործվել են նաև ջրաղացներում ու ձիթհաններում: Այս համալիրը հայտնի է նաև *պաթոս* և *մանրիչ աղացաքար* անուններով (Պարսամեան, Քէչեան 1952, 25, Խալփախչյան 1961, 30-50, Հալաջյան 1973, 124-125, Հոբոսյան 2007, 42-44, Զոլաքեան 2020, 77-80):

քարի վրա: Սանդերից մեկը կոտրված է: Բոլորն էլ գտնվում են կացարանների մերձակայքում, բացի մեկից, որը կացարանի ներսում է: Սարվորներին այն հայտնի է տիրոջ անունով՝ *Լիոյի* կամ *Լիանուշի* դինգ (Մելքոնյան Լիանուշ, Աղավնատուն գյուղից, 1926-2010 թթ.): Սարերում սանդեր և դինգեր ունենալը բնորոշ է հայոց անասնապահական մշակույթին: Սար տանում էին կենցաղային ամենաանհրաժեշտ պարագաները: Տիրինկատարում սանդերն օգտագործվել են հատիկեղեն և աղ ծեծելու՝ մանրացնելու նպատակով: Ներկայումս դուրս են եկել կիրառությունից:

Ջրի աղբյուրները. Տիրինկատարում կա երեք աղբյուր, որոնցից մեկը կառուցվել է 1960-ական թվականներին: Այն գտնվում է Տիրինկատարից հարավ-արևմուտք: Մյուս երկու աղբյուրները բնական ակեր են, որ բխում են հյուսիսային, բարձրադիր մասում, զառիվայր լանջի ստորոտից՝ առաջացնելով փոքր լճակներ:

Բնական ակով առաջին աղբյուրը կոչվում է *Կաթնաղբյուր*: Անվանումը ստացել է սպիտակավուն ջուր ունենալու պատճառով: Այն նաև կոչվում է *Խազալի աղբյուր,* քանի որ մոտ է Խազալենց կացարաններին, սակայն այս տարբերակը այդքան էլ տարածված չէ:

Հայոց մեջ *Կաթնաղբյուր* անվանումով աղբյուրները բավական շատ են, դրանց մասին կան բազմաթիվ ավանդազրույցներ: Մարդիկ հավատում են, որ դրանց ջրերն ունեն կերակրող մայրերի կաթը ավելացնելու հատկանիշ, որոշ դեպքերում նաև՝ մաշկային հիվանդությունները բուժելու հատկություն[14]:

Հաջորդ աղբյուրը կրում է վերևում հիշատակված՝ Աղավնատուն գյուղի բնակիչ Լիանուշի անվանումը (նրա կացարանը աղբյուրին ամենամոտն է եղել):

Տիրինկատարի սարվորները աղբյուրները խնամքով պահպանում են. ակերի դիմաց միջին չափի քարեր են շարել, ստեղծել ջրհավաք փոքր ավազան և ստորին հատվածում ծորակ տեղադրել: Աղտոտվելուց ու պղտորվելուց զերծ պահելու համար ջրի ակունքը ծածկել են մետաղե թիթեղով: Տարին մի քանի անգամ մաքրում են աղբյուրի ակը՝ զերծ պահելով մամռակալումից: Սարվորները, ժամանակ առ ժամանակ քերելով հողի շերտը, մաքրում են նաև բուն ակունքը: Այս գործողությունը անվանում են *աղբյուրի աչքը բացել*: Դա կատարվում է ջրի հոսքը ուժեղացնելու նպատակով[15]:

Ջրանցքները և առուները. Արագածի, Բյուրականյան լեռների, Մշո դաշտի, Մանազկերտի, Վասպուրականի և մի շարք այլ շրջանների ջրաբաշ-

[14] Բախտիկեան 1934, 69, Մխիթարեան 1958, 155, Սրապեան 1960, 452, Կոայեան 1965, 112, Յակոբեան և ուր. 1966, 100-101, Լալայան 1988, 160, Միքայելյան 1998, 151, Լալայան 2004, 196, Լալայան 2021, 388:

[15] Գաբրիելյան 2023, բանասաց՝ Զոհրաբ Աբգարյան:

խական համակարգերը միանման են եղել[16]: Արագածի արևելյան ու հարավային լանջերի ստորոտներում ժամանակին արձանագրվել են ութ ջրհավաք համակարգեր, որոնք սնվել են բազմաթիվ լճակներից և ունեցել են գլխավոր ու երկրորդական ջրանցքներ[17]:

Տիրինկատարում ևս նկատելի են նման մի ջրանցքի հետքերը, որն սկիզբ է առնում Կարմիր սար բարձունքի արևելյան ստորոտներից՝ Ամբերդ գետի ակունքի մոտակայքից: Այն ունեցել է 12 առու, որոնցից 11-ը անցնում են Ամբերդաձորի արևմտյան փեշով, իսկ մեկը՝ արևելյանով: Սարվորներն այս ջրանցքը անվանում են՝ *12 բանդեր*[18] կամ *12 առուներ* (նկ. 2)[19]: Դրա առաջին սխեմատիկ քարտեզը կազմել է Ալ. Խանաղովը և հրատարակել 1886 թ.[20]: Ավելի ուշ Գր. Ղափանցյանը կազմել է տվել ջրանցքի գծագիրը[21], իսկ Ա. Քալանթարի կազմած համակարգված քարտեզում այն համապատասխանում է՝ VI ջրհավաքին պատկանող թիվ 9 ջրանցքին[22]:

Ջրանցքը, կառուցված լինելով զառիվայր լանջին, նմանվում է դարավանդների: Ա. Քալանթարը այսպես է բնութագրում դրանց լանջային լինելը. *«Գեղեցիկ է Ամբերդի ձորը, որի լանջով դեռ այսօր էլ մեկը մյուսի թիկունքն ելած 12 ջրանցքներ են ընթանում առաջ դեպի ներքևի գյուղերը*[23]*»:* Մանրամասն տեղազննությունից պարզվում է, որ 12 ջրատար առուներն ընթանում են մոտավորապես իրար զուգահեռ: Դրանք կառուցելու համար նախ հարթեցրել են լանջը՝ բացելով որոշակի ճանապարհ, ներքևի եզրը ամրացնելով քարահողային հենաթմբերով: Լանջերի գոգավորությունները հարթեցված են մինչև 2-3 մ բարձրությամբ ամուր հենապատերով, որոնք առանց շաղախի են[24]: Մոտ 8 կմ երկարություն ունեցող ջրանցքի տարբեր

---

[16] Բոբոխյան 2020, 35, ծան. 39:

[17] Քալանթար 1937:

[18] Բանդը ջրատարի սկզբի (գլխի) հատվածն է, որի միջոցով կատարվում է ջրառը: Այս հատվածում սովորաբար կառուցում են շատ ամուր պատնեշ, քանի որ այն իր վրա է կրում ակունքներից ջրատար մտնող հոսքի ամբողջ ճնշումը: Ըստ Հր. Աճարյանի՝ ծագում է պարսկերեն՝ band* բառից, որը նշանակում է *կապ, հանգույց* (Աճառեան 1926, 406): Ա. Քալանթարի կարծիքով՝ Արագածի բոլոր ջրանցքների բանդերը հասցված են այնպիսի վայրեր, որտեղից դրանք կարող էին ջրառ իրականացնել ձնհալի շնորհիվ առաջացած ջրերի հաշվին (Քալանթար 1937, 175):

[19] Մեր համոզմամբ, ջրանցքին տրվող այս անվանումները չեն արտահայտում դրանց լանջային լինելու բնույթը: Ազգագրական նյութերում պահպանվել է լանջային ջրատարերին տրվող ժողովրդական անվանում: Ըստ Գր. Տեր-Հովհաննիսյանի հաղորդած տեղեկությունների, նման ջրատարերը Սևրի-Հիսարի հայության շրջանում հայտնի էին *սէքիւ* անվանումով: Հեղինակը բառի գրական հոմանիշ է բերում *դարուղին* (Տէր-Յովհաննէսեան 1965, 24):

[20] Хан-Агов 1886, 272-273.

[21] Ղափանցյան 1944, 170:

[22] Քալանթար 1937, 182-183: Տե՛ս նաև էջ 186-187-ի ներդիրը՝ «Արագածի ջրաբաշխական սիստեմը»:

[23] Քալանթար 1925, 221:

[24] Լանջային ջրատարի համար կառուցված պատաշարերը Աշտարակի բարբառով կոչվում էին *բիթ* (Շահազիզ 1987, 46):

հատվածներում առկա են փլուզված հենապատերի հետքեր՝ քարակույտերի ձևով:

Հասնելով Ամբերդ ամրոցից արևմուտք ընկած լանջի մոտ՝ առուները դուրս են գալիս զառիվայր հատվածից և ուղղվում դեպի հարթավայրեր, որտեղ արդեն դրանց ուղղությունը կառավարվում է երկկողմանի քարահողային հենաթմբերով: Ավելի ներքև գտնվող հատվածները խորհրդային ժամանակաշրջանում ենթարկվել են որոշ ձևափոխությունների՝ կապված նոր ոռոգման համակարգերի կառուցման հետ:

Այս ջրանցքի միջոցով ջուր է հասցվել Արարատյան դաշտի գյուղերին: Ալ. Խանաղովը և Գր. Ղափանցյանը բերում են այն գյուղերի ցանկը, որոնց ջուր է մատակարարվել 12 բանդերով. դրանք են՝ Շամիրամ, Ավան, Լեռնարոտ (Մաղդա), Ուջան, Խնուսիկ (Ղոյթուր), Սասունիկ, Կոշ, Աղցք, Թալիշ, Արուճ, Շամիրամ, Տեղեր, Օրգով: Գր. Ղափանցյանը նշում է նաև, որ ձորի արևելյան փեշով անցնող ջրատար առուն ոռոգել է Ամբերդից վերև գտնվող վանքապատկան հողերը[25]: Ամռան ամիսների ընթացքում Ամբերդ գետի ջրերը պակասել են, որի հետևանքով գյուղացիները առուներից ջուր են վերցրել հերթ պահելով: Բոլոր գյուղերի առուներն ունեին ջուր ստանալու որոշակի օրեր: Ամենաշոգ շրջանում ջուրը բավարարել է միայն չորս առվի[26]: Ըստ բանասացների՝ ջրատարերից մեկը գործել է մինչև 1967 թ.[27]: Դրանցից մեկն էլ ներկայումս օգտագործվում է որպես ավտոճանապարհ:

Տիրինկատարի արևմտյան կողմում առկա է մեկ այլ ջրհավաք համակարգ, որը համապատասխանում է Ա. Քալանթարի արձանագրած VII ջրհավաքի թիվ 10 ջրանցքին[28]: Այն բաղկացած է երեք լանջային ջրատարերից, որոնք ունեն քարահողային հենաթմբեր: Դրանց միջոցով ջրառ է իրականացվել փոքր ձորի գետից: Ի տարբերություն 12 բանդերի, այս համակարգը շատ վատ է պահպանված:

Բանահյուսական նյութերում որոշակի տեղեկություններ կան ջրանցքների վերաբերյալ: Այս առումով ուշագրավ են Աշտարակի՝ *Մեծ առու* կոչվող ջրանցքի շինարարությանը վերաբերող ավանդազրույցները: Ըստ դրանց, ջրանցքի շինարարությունը նախաձեռնել է Սբ. Գրիգոր Ականատես վարդապետը, որի պատվանունով էլ այս ջրանցքը կոչվում է նաև *Ականատեսի առու*[29]: Ականատեսը «բռնելով Քասախի ձորի ճանապարհը՝ Աշտարակի

[25] Хан-Агов 1886, 271, Ղափանցյան 1944, 171, Капанцян 2008, 125:

[26] Вейс-фон-Вейссенгоф 1883, 166.

[27] Գաբրիելյան 2023, բանասաց՝ Արգար Արգարյան:

[28] Քալանթար 1937, 183:

[29] Ըստ Աշտարակի շրջանում պահպանված ավանդազրույցի՝ *Ականատես* պատվանունը Գրիգոր վարդապետին շնորհվել է այն պատճառով, որ նա տեսել է Արագածի գլխից անպարան կախված կանթեղի լույսը, որի տակ աղոթել է Գրիգոր Լուսավորիչը: Ըստ ժողովրդական պատկերաց-

տակից գնացել է ձորն ի վեր և հասել է Մուղնու տակը, այնտեղ, որտեղ գետի հունը հավասար է եղել Աշտարակի գյուղատեղի մակերևույթին, այդտեղից սկսել է ժողովրդի օգնությամբ և առվահանության գործին հմուտ վարպետների ձեռքով քանդել, տաժանելի աշխատանքով, գետի աջակողմյան բարձրության լանջերը, ջարդել պեղել ապառաժները, որոշ քանակով ջուր առնելու չափով ու տարողությամբ առու է փորել և ջուրը բերել հասցրել է մինչև գյուղագլուխը»[30]:

Տիրինկատարը՝ որպես հոգևոր միջավայր

Սրբավայրերը. Տիրինկատարում կա երկու սրբավայր՝ *Կըզըլ զիարաթ* (նկ. 3) և *Կարմիր սարի սուրբ*:

Կըզըլ զիարաթ (*Աղջկա սուրբ)* անվան առաջին մասը՝ *կըզըլ*, թուրքերեն է, նշանակում է *աղջիկ (kiz)*[31]*:* Որոշ սարվոր եզդիներ այդ բառն ընկալում են որպես բարձունքի հոմանիշ[32]:

Ուշագրավ է, որ Գեղամա լեռների ամենաբարձր գագաթը՝ «վիշապային» անվամբ՝ Աժդահակը, ունեցել է երկրորդ՝ *Կըզըլ դաղ* անվանումը[33]: Նշենք նաև, որ Աղավնատուն գյուղում առանց հստակեցման՝ *կըզըլ* անվանումով մի վայր է հիշատակվում[34]: Անվան երկրորդ մասը՝ *զիարաթ (zîyaret)* բառը քրդերեն է, նշանակում է *սրբավայր*[35]: *Զիարաթը* հայերենի բարբառներում ունի նաև *ուխտագնացություն* իմաստը[36], քրդերենում *zîyaretvan*, նշանակում է *ուխտագնաց*[37]*:*

Աղջկա սուրբը գտնվում է Տիրինկատար բարձունքի գագաթին՝ առապարի վրա: Նախկինում այս սրբավայրի անվան ներքո հասկացվել է հենց Տիրինկատար գագաթը[38]: Այն հնավայրի ամենաբարձր կետում է, երբեմնի աշտարակաձև կառույցի վրա, ու պատահական չէ, որ խորհրդային տարիներին անմիջապես կառույցի կողքին տեղադրվել է շանթարգել:

Այս սրբավայրից հրաշալի տեսարաններ են բացվում բոլոր ուղղություններով, Մասիսը՝ հարավում, Արագածի գագաթները՝ հյուսիսում, Գե-

---

ման՝ «Էն կանթեղը ամեն մարդ չի տեսնիլ. արդար մարդի աչքին կերևա» (Ղանալանյան 1969, 91, Շահազիզ 1987, 44-45):

[30] Շահազիզ 1987, 46:

[31] Դերմենջյան 2013, 14, Ղազարյան 2003, 277:

[32] Գաբրիելյան 2023, բանասաց՝ Ջանիկ Շամոյան:

[33] Բոբոխյան 2018, 297:

[34] Գրիգորյան, Մաթևոսյան 2007, 305:

[35] Կատվալյան և ուր. 2016, 437, 568:

[36] Գասպարյան և ուր. 2001, 410:

[37] Կատվալյան և ուր. 2016, 580:

[38] *Տիրինկատար* և *Կըզըլ զիարեթ* անվանումների զուգահեռների մասին տե՛ս Բոբոխյան 2018, 292-298:

ղամա լեռները՝ արևելքում և Արտենի լեռը՝ արևմուտքում: Կարծես Աղջկա սուրբը գտնվում է մի կարևորագույն դիտակետում:

Սրբավայրը, որի կառույցի (4,50x5,00 մ) բարձրությունը 2,20 մ է, ձգվում է հարավ-արևելք հյուսիս-արևմուտք առանցքով, դուռը հարավային կողմում է: Պատերը կառուցված են չոր շարվածքով, ծածկը նոր է՝ փայտե գերաններով և ազբեստե կղմինդրներով: Ներսում կան քրիստոնեական սրբանկարներ, մոմ վառելու քարե հարթակ և խաչաքանդակ կրող քարեր: Հավատավոր մարդիկ իրենց զգեստներից կտորներ, թաշկինակներ և գլխաշորեր են կապում տանիքի գերաններից: Ըստ սարվորների՝ Տիրինկատարի Աղջկա սուրբն ունի երկու առանձնահատուկ հոգևոր գործառույթներ՝ խնդրակատար լինելը և փորձանքներից հեռու պահելը[39]: Այն պաշտամունքային վայր է և՛ հայերի, և՛ եզդիների համար:

Սրբավայրի դիրքը, ջրային աղբյուրների, վիշապների ու աշտարակների առկայությունը Տիրինկատարում հիշեցնում են Աստղիկ դիցուհու պաշտամունքը: Ըստ հին հայոց ավանդության, Աստղիկը ծնունդ էր առել և մեծացել Մեղրագետի մոտ գտնվող Տիրինկատար լեռան ստորոտին, որտեղ էլ գտնվում էր նրա պաշտամունքի կենտրոնը[40]: Աստղիկին՝ որպես Նոյի աղջկա, ամենուրեք բլուրներ և բարձր սարեր էին նվիրված, և «ոմանք կկարծեն, թե այդ բարձունքները աստղերը դիտելու դիտարաններ են եղել»[41]: Աստղիկի պաշտամունքի հիմնական կենտրոնները՝ Աստղկա բերդերը, լեռնային բարձր կետեր էին հատկապես Վասպուրականում և Տարոնում (Դաղոնա սար/Գրգուռ, Վարագ, Պաղատ)[42]:

Պատահական չէ, որ հաճախ բարձրլեռնային սրբավայրերի հետ են կապվում փերիների առասպելները: Տիրինկատարի Աղջկա սրբի մասին, օրինակ, պատմում են, թե երեք կին տեսել են, թե ինչպես երկար մազերով մի աղջիկ մտել է այնտեղ ու անհայտացել[43]: Գեղամա լեռների Սև և Կարմիր սարերի մասին առասպելի համաձայն, Սև սարը բռնակալ է եղել, իսկ Կարմիր սարը՝ մուրազաբեր աղջիկ, որին բռնությամբ տիրացել է առաջինը[44]:

Կարմիր սարի սուրբը գտնվում է համանուն բարձունքից ներքև, խիստ զառիվայր լանջին, դժվարամատչելի տեղանքում: Սրբավայր հասնելու երկու ուղի կա՝ հյուսիսից և հարավից, երկու դեպքում էլ պետք է շրջանցել Կարմիր սարի բարձունքը: Քարքարոտ և ավազոտ լանջին անգամ հստակորեն ձևավորված արահետ չկա: Սուրբը հրաբխային լավաների շերտում

[39] Գաբրիելյան 2023, բանասաց՝ Արև Աբգարյան:

[40] Սիմոնյան 2013, 234-235, 240:

[41] Սիմոնյան 2013, 237: Հաշվի առնելով վերն ասվածը՝ կարելի է զուգահեռ տանել *կըզըլ* բառի վերաբերյալ գոյություն ունեցող նույն ընկալման հետ:

[42] Աճեմեան 1917, 97-101, Ղանալանյան 1969, 211, Բոբոխյան 2017, 39:

[43] Բոբոխյան 2013, բանասաց՝ Իշխան Աիբյան:

[44] Ղանալանյան 1969, 18, Հարությունյան 2000, 207-208:

առաջացած բնական մի խորշ է, որի մեջ նկատելի են վառած մոմերի հետքերը: Անմիջապես խորշի դիմաց առատ խոտածածկով փոքրիկ, հարթ տարածք կա, որտեղ 3-4 մարդ հազիվ կարող են կանգնել:

Գերեզմանոցն ու առանձին թաղումները. Տիրինկատարում առկա է երկու առանձին թաղում, մեկ հուշադամբարան և գերեզմանոց՝ շուրջ 100 գերեզմանաթմբերով:

Գերեզմանոցը գտնվում է հարավային մի հարթ տեղամասում՝ Աղջկա սուրբ տանող ճանապարհի աջ կողմում: Ամենայն հավանականությամբ, գերեզմանոցը սկզբնապես պատկանել է որոշ քոչվոր ցեղախմբերի: Հետագայում այնտեղ թաղումներ են կատարել նաև եզդիները: Այդ մասին են վկայում ուղղանկյուն հատակագծով չորս գերեզմանները՝ շաղախով շարված պատերով և հայերեն արձանագրություններով:

Երկու առանձին թաղումներն Աղջկա սրբի տարածքում են: Դրանցից մեկն ունի շրջանաձև, մյուսը՝ ուղղանկյուն հատակագիծ: Ամենայն հավանականությամբ, դրանք եղել են ինչ-որ առանձնահատուկ մարդկանց գերեզմաններ: Դրանց թվագրությունը պարզ չէ. հաշվի առնելով այն հանգամանքը, որ սարվորները տեղեկություն չունեն այս թաղումների մասին, հնարավոր է, որ դրանք վերաբերում են XIX դ., գուցե նաև ուշ միջնադարին: Հետաքրքիր է, որ դամբարաններին կից հայտնաբերվել է կարմիր չեչաքարե (պեմզա) խոյաքանդակ:

Հուշադամբարանը հայտնի է *Անախասի քար* անվանումով, գտնվում է Տիրինկատարի հյուսիսարևմտյան հատվածում՝ զառիվայրի ստորոտին: Նվիրված է Անախաս Հակոբյանին (1890-1968 թթ.), որը վախճանվել է սարում, թաղված է Աղավնատուն գյուղի գերեզմանոցում:

Առկա տվյալները փաստում են, որ, ի տարբերություն եզդիների, հայերը սարում մահացածին հուղարկավորելու սովորություն չեն ունեցել: Այս երևույթը կարելի է համարել եզդիների պատմականորեն ձևավորված քոչվորական կենսակերպի դրսևորում (նրանց համար և՛ ձմեռային, և՛ ամառային կայանները հավասարազոր բնակատեղիներ են համարվել):

Երազանքի քարերը. Տիրինկատարիում առկա են կոնաձև շարվածքով, 0,5-3 մ բարձրություն ունեցող բազմաթիվ քարակույտեր (նկ. 4): Սարվորները դրանք համարում են «երազանքի քարեր», որոնք արձանագրվել են 12 վայրում, բայց հատկապես մեծ կուտակումներով հանդիպում են *Աղջկա սրբի* մոտակայքում (ավելի քան 200 միավոր): Դրանց մի մասը, շարված է յոթ քարից՝ այդ թվի սրբազնացված լինելու հանգամանքով պայմանավորված և կարևոր ու նվիրական նպատակի իրականացման ակնկալիքով[45]:

[45] Գաբրիելյան 2023, բանասաց՝ Արև Աբգարյան:

Նկ. 1. Ամառային կացարան (լուսանկարը՝ Արտակ Հախվերդյանի)

Նկ. 2. *12 բանդեր* ջրանցքը (լուսանկարը՝ Արտակ Հախվերդյանի)

Նկ. 3. Աղջկա սուրբը (լուսանկարը՝ Արսեն Բոբոխյանի)

Նկ. 4. Երազանքի քարեր (լուսանկարը՝ Արսեն Բոբոխյանի)

Հայոց հավատալիքներում քարի պաշտամունքը մեծ տեղ է գրավում: Արժե նշել, որ նման հավատալիք կար նաև Ղարադաղի Իրգութին գյուղում, կոչվում էր *Քումեն քար* (նպատակի քար), որը փոքր ժայռ էր, որի վրա պատկերված էր Սուրբ Սարգիսը. այստեղ ուխտի էին գնում հիմնականում Զատիկին[46]: Տիրինկատարի սրբավայրի հետ որոշակի աղերսներ կարելի է տեսնել Վարանդայի Ավդուռ գյուղի *«Ավդալ-օջախ»* ուխտավայրի հետ, որտեղ ուխտի էին գնում չբեր կանայք և նրանք, որոնց որդիները տարին լրացած մահանում էին: Առաջինները որդի էին խնդրում, իսկ երկրորդները՝ իրենց որդիներին առողջություն[47]: Քարի պաշտամունքին վերաբերող ուշագրավ հուշարձան է Տաթևի վանքի հանդիպակաց լեռան վրա գտնվող *Եզան գերեզման-ուխտատեղին:* Այն մի մեծ քարակույտ էր, որի մոտով անցնողները պարտավոր էին դրա վրա մի քար ավելացնել[48]: Նման մի վայր եղել է նաև Օշականի մոտերքում[49]: Պաշտվող արհեստական քարակույտեր կային Ներքին Բասենում, որոնք ընկալվում էին որպես կայծակից զարկվածների գերեզմաններ՝ հենց կայծակնահարվելու տեղում շարված: Մոխրացած աճյունի տեղում դնում էին մի մեծ քառանկյունի սալ քար, որի վրա լցնում էին ձվաչափ քարեր: Դրանք նման էին արտերի մեջ հանդիպող քարակույտերին: Ով անցնում էր քարակույտի մոտով, պարտադիր պիտի մի քար ավելացներ դրա վրա[50]:

Լեռների գագաթներին, հաճախ սրբերի գերեզմանների մոտ քարակույտեր ստեղծելը տարածված է տարբեր ժողովուրդների ավանդույթներում. դա կապվում է լեռների ու քարերի պաշտամունքի հետ: Այս վարքային դրսևորումը ընդհանուր առմամբ նպատակ ունի կրկնապատկելու մարդկային ուժը[51]:

Քարաժայռը. Սև սարի զառիվայր և դերբուկոտ լանջին է գտնվում «Տրդատի քար» (խոյեցիների բարբառով՝ «Ծրդատի քար») կոչվող հսկա քարաժայռը (չափերն են՝ 3,50x5,00 մ, բարձրությունը՝ 3,70 մ), որը Տիրինկատարի հյուսիսային կողմից կարծես հսկում է ողջ տարածքը: Տարածքի այլ քարաժայռերի համեմատ լինելով նկատելիորեն մեծ՝ այն ծառայում է իբրև տեղանքի կողմնորոշիչ: Վրան առկա են՝ մարդ, արև, շրջան, եղջերավոր կենդանի ուրվագծող հնագույն ժայռապատկերներ:

Ծրդատի քարերը հայտնի են Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններում: Ամենայն հավանականությամբ, անվանումը կապված է Տրդատ III թագավորի՝ Մասիս բարձրանալու և այնտեղից Մայր Տաճարի ու Հռիփսիմյանց

[46] Հովսեփյան 2009, 92:
[47] Լալայան 1988, 156:
[48] Լալայան 1988, 172:
[49] Араратский 1980, 48.
[50] Հակոբյան 1974, 254:
[51] Штернберг 1936, 381.

կույսերի գերեզմանների վրա եկեղեցիներ կառուցելու համար քարեր բերելու՝ Ագաթանգեղոսի հաղորդած պատմության հետ[52]: Այս տեղեկությունը վերապատմում է ժողովուրդը Ծիրինկատար լեռան և Մշո Սուրբ առաքելոց վանքի համատեքստում[53]: Նույնը պատմել են նաև Հարքում[54]: Վանի մոտ գտնվում է Ծրտոտ/Տրդատի քար կոչված ժայռը, որին է միանում տեղի՝ հարսանեկան թափոր հիշեցնող քարերի շարքը[55]:

Եզրակացություններ

Արձանագրված փաստերի հիման վրա Տիրինկատարում կարելի է առանձնացնել կենսագործունեության երկու ոլորտ՝ տնտեսական և հոգևոր: Կարևոր է շեշտել այն հանգամանքը, որ Տիրինկատարի գոտում մարդիկ գործունեություն են ծավալել տարվա որոշակի ժամանակամիջոցում՝ հարմարվելով տարածքի օգտագործման «ցիկլային» օրինաչափություններին: Պետք է նաև հավելել, որ տարածքն իր գործառութային նշանակությունը չի կորցնում ողջ տարվա ընթացքում, քանի որ այն ջրային պաշարների կուտակման և օգտագործման կարևորագույն գոտի է, նաև հոգևոր կենտրոն, ինչը մշտապես առկա է համայնական հիշողության մեջ:

Տիրինկատարը մշակութային ուրույն միջավայր է, որտեղ ածանցվում են հայկական մշակույթում գոյություն ունեցող բազմաթիվ իրողություններ: Կոլեկտիվ հիշողության մեջ եղած որոշակի տվյալներ դրսևորվում են աղոտ պատկերացումների միջոցով՝ երբեմն արտահայտվելով միայն անվանումների ձևով, որոնց ենթատեքստերը հետագա բացահայտման կարիք ունեն:

Ներկայացվող տվյալները, որպես համեմատական նյութ, կարող են նոր լույս սփռել նաև տարածքի հնագույն շրջանի պատմության վրա, երբ Տիրինկատարը հոգևոր և տնտեսական նշանակության կարևոր կենտրոն էր ողջ Հայկական լեռնաշխարհում:

Օգտագործված գրականություն

Ագաթանգեղոս 1883, Ագաթանգեղայ Պատմութիւն, Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 525 էջ:

Աճառեան Հ. 1926, Հայերէն արմատական բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 698 էջ:

Աճեմեան Հ. 1917, Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահիւսութեան, Էջմիածին, տպ. Մայր Աթոռոյ, 104 էջ:

Բախտիկեան Ս. 1934, Արաբկիր և շրջակայի գիւղերը, Պէյրութ, «Վահագն», 156 էջ:

[52] Ագաթանգեղոս 1883, 446-447:

[53] Ղանալանյան 1969, ԾԳ:

[54] Բենսէ 1901, 30-31:

[55] Սրվանձտյանց 1978, 384: Ծրռտոտ քար է հիշատակվում Հադրութի Վարդաշատ գյուղի մերձակայքում՝ կապվելով, սակայն, արծվի ծերտի հետ (Սարգսյան 2023, 445): Ծրտոտ քար է հիշատակվում նաև Վանի Այգեստան թաղամասում (Լալայեան 1913, 26):

Բդոյան Վ. 1972, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 511 էջ:
Բենսէ 1901, Բուլանըխ կամ Հարք գաւառ, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանց, 314 էջ:
Բոբոխյան Ա. 2013, ԴԱՆ, Արմավիր, Աղավնատուն:
Բոբոխյան Ա. 2017, Խորենացու վկայությունը Պաղատի սրբազան տարածքի մասին և վիշապաքարերի խնդիրը, Արևելագիտությունը Հայաստանում, հ. 3, խմբ.՝ Ռ. Սաֆրաստյան և ուր., Երևան, «Գիտություն», էջ 32-54:
Բոբոխյան Ա. 2018, Արագածի Տիրինկատար սրբավայրը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, N 1, էջ 290-301:
Բոբոխյան Ա. 2020, Ատրպետի «Գիտական արկածները» և Վիշապ քարակոթողների հայտնագործումը, Երևան, ՀՊԹ հրատ., 152 էջ:
Գաբրիելյան Ռ. 2023, ԴԱՆ, Արմավիր, Աղավնատուն:
Գասպարյան Գ., Գրիգորյան Ա., Հակոբյան Ա. և ուր. 2001, Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, Երևան, «Գիտություն», 451 էջ:
Գրիգորյան Գ., Մաթևոսյան Բ. 2007, Աղավնատուն, Երևան, «Տոներ», 320 էջ:
Դերմենջյան Մ. 2013, Հայերեն-թուրքերեն բառարան, Երևան, հեղ. հրատ., 400 էջ:
Լալայան Ե. 1988, Երկեր, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 505 էջ:
Լալայան Ե. 2004, Երկեր, հ. 3, Երևան, «Գիտություն», 384 էջ:
Լալայան Ե. 2021, Երկեր, հ. 4, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., 692 էջ:
Լալայեան Ե. 1913, Վասպուրական. Հավատք, Ազգագրական հանդէս, գիրք 25, էջ 21-60:
Խալփախչյան Հ. 1961, Հայաստանի արտադրական կառուցվածքները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 92 էջ:
Կատվալյան Վ., Աբրահամյան Ա., Մխիթարյան Գ. 2016, Քրդերեն-հայերեն, հայերեն-քրդերեն գործնական բառարան, Երևան, «Ասողիկ», 590 էջ:
Կռայեան Մ. 1965, Բալու: Բալուի կեանքէն առնուած պատկերներ, յուշեր, չափածոյ քերթուածներ և արձակ էջեր, Անթիլիաս, հրատ. նշված չէ, 768 էջ:
Հալաջյան Գ. 1973, Դերսիմի հայերի ազգագրությունը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 5, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 301 էջ:
Հակոբյան Գ. 1974, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, «Հայաստան», 458 էջ:
Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, տպ. Վահէ Սէթեանի, 527 էջ:
Հոբոսյան Ս. 2007, Հայոց ձիթհանության մշակույթը (XIX դ. - XX դ. առաջին կես), Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 23, Երևան, «Գիտություն», էջ 5-98:
Հովսեփյան Հ. 2009, Ղարադաղի հայերը. Ազգագրություն, հ. 1, Երևան, «Գիտություն», 502 էջ:
Ղազարյան Ռ. 2003, Թուրքերեն-հայերեն բառարան, Երևան, «Միտք», 574 էջ:
Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 530 էջ:
Ղափանցյան Գ. 1944, Արա Գեղեցկի պաշտամունքը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 182 էջ:
Միքայելյան Հ. 1998, Ծալկայի հայերի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, «Նոյ», 307 էջ:
Մխիթարեան Գ. 1958, Մեր գիւղը Դատեմ, Պոսթըն, տպ. «Հայրենիք», 256 էջ:
Յակոբեան Յ., Վալադեան Պ., Օղկասեան Պ. և ուր. 1966, Պատմութիւն Պաղնատան, Պոսթըն, տպ. «Հայրենիք», 297 էջ:
Նամալեան Ա. 1890, Հարևաններ, Մուրճ, N 11, էջ 1501-1512:
Շահազիզ Ե. 1987, Աշտարակի պատմությունը, Երևան, «Հայաստան», 352 էջ:

Չոլաքեան Յ. 2020, Քեսապի նիւթական մշակոյթը, Երևան, ՀԱԻ հրատ., 264 էջ:
Պապուխյան Ն. 1972, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 168 էջ:
Պարսամեան Մ., Քէչեան Ա. 1952, Ակն և ակնցիք, Փարիզ, Ամերիկայի Ակնայ հայրենակցական միության հրատ., 1045 էջ:
Սարգսյան Ա.Յ. (խմբ.) 2023, Հադրութի բառ ու բան, Երևան, «Արմավ», 783 էջ:
Սիմոնյան Լ. 2013, Աստղիկ դիցուհու պաշտամունքը Վասպուրականում և Տարոնում, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I, Վան, խմբ.՝ Հ.Տ. Մարության, Երևան, «Գիտություն», էջ 233-242:
Սրապեան Լ. 1960, Քղի. տեղագրական և ազգագրական, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 72 էջ:
Սրվանձտյանց Գ. 1978, Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 668 էջ:
Տէր-Յովհաննէսեան Գ. 1965, Պատմագիրք Սիվրի-Հիսարի հայոց, Պէյրութ, տպ. «Մշակ», 688 էջ:
Քալանթար Ա. 1925, Քարե դարը Հայաստանում, Նորք, N 5-6, էջ 207-232:
Քալանթար Ա. 1937, Մի հնագույն ջրաբաշխական սիստեմ Խորհրդային Հայաստանում, Տեղեկագիր պատմության և գրականության ինստիտուտի, գիրք II, Երևան, էջ 171-194:
Араратский А. 1980, Жизнь Артемия Араратского, Ленинград, «Наука», 224 с.
Вейс-фон-Вейссенгоф С. 1883, Сведения о состоянии орошения на Кавказе, Тифлис, изд. Кавказского общества сельского хозяйства, 272 с.
Мкртумян Ю. 1974, Формы скотоводства в восточной Армении (вторая половина XIX-начало XX в.), Армянская этнография и фольклор, материалы и исследования, т. 6, Ереван, изд. АН АССР, с. 5-90.
Калантар А. 1895, Алагезские казенные летние пастбища Александропольского и Эчмиадзинского уездов Эриванской губернии. Материалы для устройства казенных летних и зимних пастбищ и для изучения скотоводства на Кавказе, т. 3, ч. 2, Тифлис, тип. Т.П. Козловского, с. 71-247.
Капанцян Г. 2008, Ара Прекрасный: мифотворческий образ у армян, в кн: Неизданные сочинения, Ереван, изд. ЕГУ, 141 с.
Хан-Агов А. 1886, Экономический быт государственных крестьян Эчмиадзинского и Сурмалинского уездов Эриванской губернии. Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. 3, ч. 1, Тифлис, тип. А.А. Михельсона, с. 227-455.
Штернберг Л. 1936, Первобытная религия в свете этнографии, Ленинград, изд. Института народов Севера, 572 с.

ЭТНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПАМЯТНИКА ТИРИНКАТАР В АРАГАЦЕ

Рафик Габриелян

Резюме

Памятник Тиринкатар стал известен научному миру в 2012 году. Помимо археологических памятников на этой территории было найдено также множест-

во сооружений этнографического характера, которые по их функциональным назначениям можно разделить на две основные группы: экономические и духовные. К экономической группе относятся жилища, каналы, источники воды и ступы, а святыни, камни желаний, кладбища и т.д. относятся к духовной.

Жилища возведены из камней, рядом с ними есть загоны для скота. Неподалеку от жилищ найдены каменные ступы.

Важной святыней Тиринкатара считается Ахчка сурб, возле которой выложена груда камней желаний. Святыня представляет собой каменное строение квадратной формы, имеющее культовое значение как для армян, так и для езидов, где по сей день проводятся различные ритуалы.

Ключевые слова – Арагац, Тиринкатар, святилище, канал, летние пастбище, родник, жилище.

THE ETHNOGRAPHIC FEATURES OF THE SITE TIRINKATAR ON ARAGATS

Rafik Gabrielyan

Abstract

The archaeological site of Tirinkatar on Aragats became known to the scientific society in 2012. In addition to archaeological monuments, many ethnographic phenomena were also recorded on that area. This article attempts at presenting the preliminary results of the ethnographic research.

Ethnographic phenomena according to their function can be divided into two main spheres: economic and spiritual. The economic sphere includes dwellings, canals, springs and stone mortars. The spiritual sphere is reflected in sanctuaries, dream stones, cemeteries, etc.

The dwellings are made of stone, next to which there are corrals. They usually have a rectangular plan. Stone mortars are also located near the dwellings. In Tirinkatar there are three springs, the waters of which are used for drinking and domestic purposes.

An important sanctuary named Aghjka Surb is the most important location in Tirinkatar, near which are built many dream stones. The sanctuary is built of stone with a square plan. The sanctuary is a place of worship for both the Armenians and the Yezidis, where various rituals are still performed.

Key words – Aragats, Tirinkatar, sanctuary, canal, summer pasture, spring, dwelling.